## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.3

## ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **03 հուլիսի 2026թ.**

2026թ. հուլիսի 3-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ անվադողերի ձեռքբերման ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Սուքիասյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Վ. Սանթուրյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ, |
| Ն. Բաղդասարյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվապահ՝ նյութական գծով: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով գեներացված փոփոխված հայտարարության և հրավերի տեքստերը հաստատելու մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

### 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՏԵՔՍՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով գեներացված Ընթացակարգի փոփոխված հայտարարության, ինչպես նաև փոփոխված հրավերի տեքստերի նախագծերը.

2026թ. հուլիսի 3-ին Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված Ընթացակարգի փոփոխված հայտարարության, ինչպես նաև փոփոխված հրավերի տեքստերի նախագծերը:

2. Հաստատել Ընթացակարգի հրավերում փոփոխության կատարման մասին հայտարարության տեքստը, համաձայն սույն արձանագրության Հավելված 1-ի:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ. հուլիսի 3-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը նշանակել համապատասխանաբար Ընթացակարգի փոփոխված հրավերով և հայտարարությամբ սահմանված օրը և ժամին՝ ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Սանթրոսյան ____________

Ն. Բաղդասարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան ____________